# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 569 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2022 թվականի _____ N__-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի N 569 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 28-ի «Մաքսային արժեքի որոշման նպատակով համախառն ամենամեծ քանակի որոշման կարգը սահմանելու մասին» N 569 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

- Որոշման վերնագրում և Որոշմամբ հաստատված կարգի վերնագրում «ՄԱՔՍԱՅԻՆ» բառից առաջ լրացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ» բառերը.
- Որոշման նախաբանում «82-րդ հոդվածի 4-րդ մասի» բառերը փոխարինել «31-րդ հոդվածի 4-րդ մասի» բառերով.
- Որոշման 1-ին կետում «Սահմանել» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների» բառերը.
- Որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի 1-ին պարբերության մեջ «ազգային վիճակագրական ծառայության կողմից մաքսային մարմնի» բառերը փոխարինել «վիճակագրական կոմիտեի կողմից մաքսային մարմնին» բառերով, իսկ նույն կետի 2-րդ պարբերության մեջ «ազգային վիճակագրական ծառայության կողմից» բառերը փոխարինել «վիճակագրական կոմիտեի կողմից» բառերով.
- Որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետում «75-րդ հոդվածի 4-րդ կետում» բառերը փոխարինել «25-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում» բառերով.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ